# ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՆՍՏԱՆԻ» (ՍԱՔԱՐԹՎԵԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 75- 76 (16271) ՇԱԲԱԹ, 27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ


ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ 69-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆՈՒՄ

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՎԵՐԱԴԱՐՁՐԻՆՔ ՕՐԵՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ»

*Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին Նյու Յորքում մասնակցում է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 69-րդ նստաշրջանին:*



Նստաշրջանի աշխատանքի շրջանակներում, Վրաստանի կառավարության ղեկավարը սեպտեմբերի 22-ին ելույթ ունեցավ ժողովրդաբնակության եւ զարգացման միջազգային խորհրդաժողովին: Վարչապետի խոսքերով, վերջին 20 տարիների ընթացքում, Վրաստանը բավականին առաջընթաց է ունեցել վերոնշյալ առաջնահերթություններով: «Մեր երկիրը նպատակամղվածորեն գործում է մի շարք նախաձեռնությունների ուղղությամբ, որոնք ուղղված են բնակչության բարօրության բարելավմանը: Անցյալ տարի մեր կառավարությունը սկսեց գործել համընդհանուր առողջապահության ապա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ

*ՄԱԿ-ի Գլախավոր ասամբլեայի 69-րդ նստաշրջանի աշխատանքի շրջանակներում, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին անցկացրել է մի շարք հանդիպումներ:*



Ինչպես տեղեկացրեց Վրաստանի ԱԳ նախարար Մայա Փանջիկիձեն, Վրաստանի վարչապետը հանդիպում է ունեցել ԱՄՆ նախագահի հետ: Նախարարի խոսքերով, վարչապետը՝ տիկնոջ հետ, մասնակցել է Բարաք Օբամայի եւ նրա տիկնոջ՝ Միշելի անունից տրված ընդունելությանը, որի ընթացքում զրուցել է ԱՄՆ նախագահի հետ: Մայա Փանջիկիձեի հավաստմամբ, Իրակլի Ղարիբաշվիլին եւ Բարաք Օբաման հանդիպմանը զրուցել են ընդհանուր թեմաների եւ Վրաստանում ընթացող գործընթացների մասին:

Նյու Յորքում Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ Եվրամիության Եվրոպական խորհրդի նախագահ Հերման Վան Ռոմպեյի, Քուվեյթի վարչապետի, Կանադայի կառավարության ղեկավարի, Իրանի նախագահի հետ:

## ՎՐԱՍՏԱՆԸ՝ ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀ



Վրաստանը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընթացիկ նստաշրջանի փոխնախագահն է, եւ այդ պաշտոնը կզբաղեցնի մեկ տարվա ընթացքում:

Վրաստանը, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նախագահի հետ միասին, աշխատելու է նստաշրջանի օրակարգերի ձեւավորման եւ քննարկման համար հարցերի առաջադրման գործընթացին:

ՄԱԿ-ում Վրաստանի մշտական ներկայացուցիչը տեղ է զբաղեցնելու նախագահությունում եւ ղեկավարելու առանձին նիստերը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆՈՒՄ

## ԻԼԻԱ ԵՐԿՐՈՐԴ. «ՄԵՐ ԵՐԿՈՒ ԵՐԿՐՆԵՐԸ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՕԱԶԻՍ ԵՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ»

### ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱՎ ՎԻՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

*Սեպտեմբերի 25-ին Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք, Սրբազնագույն եւ Երանաշնորհ Իլիա Երկրորդը պատրիարքարանում հանդիպում ունեցավ վիրահայ համայնքի՝ Թբիլիսիի, Սամցխե-Ջավախեթիի եւ Քվեմո Քարթլիի տարածաշրջանների հայկական կրթական ու մշակութային օջախների եւ հասարակական կազմակերպությունների մի խումբ ներկայացուցիչների հետ:*

Հանդիպմանը Սրբազնագույն եւ Երանաշնորհը խոսեց վրաց-հայկական դարավոր բարեկամության մասին՝ ընդգծելով, որ մեր երկու ժողովուրդները, լինելով քրիստոնեական հինավուրց ազգեր, հավատարիմ մնալով իրենց դավանանքին, հասան անկախ պետականության: «Հիշում եմ՝ Վատիկանում, Հռոմի Պապի հետ հանդիպմանը, Կաթոլիկ եկեղեցու ղեկավարը, նայելով քարտեզին, տեսնելով, թե աշխարհագրական ինչ դիրք ունեն Վրաստանն ու Հայաստանը, ասաց, որ մեր երկրները քրիստոնե-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՄԱԺՈՂՈՎ

## ՀԱՆՈՒՆ «ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐՑԱԽ-ՍՓՅՈՒՌՔ» ԵՌՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ

*«Վրաստան» թերթը նախորդ համարում հաղորդել էր այն մասին, որ Երեւանում սեպտեմբերի 18-ին մեկնարկեց «Հայաստան-Սփյուռք» 5-րդ Համահայկական համաժողովը:*

*Սեպտեմբերի 20-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, Երեւանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում, մասնակցեց համաժողովի փակման արարողությանը, որտեղ հանդես եկավ ելույթով:*



Ողջունելով համաժողովի մասնակիցներին՝ Հայաստանի նախագահը համոզվածություն հայտնեց, որ Համահայկական սույն հավաքին առաջարկվել, քննարկվել եւ ընդունվել են համահայկական նոր ծրագրեր, մշակվել Հայաստան-Սփյուռք գործակցության առաջնահերթությունները, որոնք բոլորի ակտիվ մասնակցությամբ կյանքի կկոչվեն եւ կնպաստեն «Հայաստան-Արցախ-Սփյուռք» եռմիասնության հետագա զարգացմանը: «Հայ ժողովուրդն այսօր աշխարհին է ներկայանում անկախ Հայաստանով, անկախ Արցախով եւ զորեղ սփյուռքով:

Արդի աշխարհում հայ ժողովրդի ամենամեծ քննությունը Հայաստանի պետականության առօրյա կյանքի կազմակերպման գործն է: Եթե մեզ հաջողվեց հաղթահարել ամենաբարդ քննությունը, որն էր պատերազմը, ապա մենք իրավունք չունենք ընկրկելու այսօրվա

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

## ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՆ ԸՆԴԳԾԵՑ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ

*Մենք արդեն գրել ենք, որ սեպտեմբերի 18-ին, Հայաստանի սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ կազմակերպված «Հայաստան-Սփյուռք» 5-րդ համաժողովը մեկնարկեց Ազգային պատկերասրահում, ամերիկահայ նկարիչ Դանիել Վարուժան Հեճինյանի անհատական ցուցահանդեսի բացմամբ եւ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի այցելությամբ:*

«Հայաստանի-Սփյուռք» 5-ին համաժողովի բացման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ հաջորդ օրը՝ սեպտեմբերի 19-ին, Երեւանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում:

Համաժողովին մասնակցեց սփյուռքա-

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-Ը՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐ

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ՝ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ



*Հայաստանի Անկախության օրվա առթիվ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին շնորհավորել է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանին՝ մաղթելով հաջողություններ ու բարօրություն:*



«Մեր երկրների միջեւ բարեկամությունը չափվում է հազարամյակներով: Վրաստանում հարգում են Ձեր երկրի մեծ մշակույթն ու պատմությունը: Մեր հարաբերությունները ոչ միայն բարեկամության եւ եղբայրության օրինակ են, այլեւ տարածաշրջանի բարօրության, կայունության, անվտանգության ու զարգացման կարեւորագույն նախադրյալ»,- իր ուղերձում, մասնավորապես, գրել է Գիորգի Մարգվելաշվիլին: Վրաստանի նախագահը պատրաստակամություն է հայտնել աշխատել փոխհարաբերությունների հետագա խորացման եւ զարգացման ուղղությամբ:

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

*Սեպտեմբերի 21-ին, Հայաստանի Անկախության 23-րդ տարեդարձի առթիվ, Վրաստանում Հայաստանի դեսպանությունը անցկացրեց ընդունելություն:*



Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը ներկաներին ուղղված իր խոսքում մասնավորապես նշեց. «Շնորհավորում եմ բոլորիս մեր հայրենիքի Անկախության 23-րդ տարեդարձի առթիվ, անկախություն, որին հայ ժողովուրդն արժանացավ իր ուժեղ ու տոկուն կամքի, իր համառության ու միասնականության շնորհիվ՝ բազմաթիվ դժվարությունների հաղթահարման արդյունքում պահպանելով, զարգացնելով ու հզորացնելով իր երբեմնի երազած երկիրը: Մաղթում եմ, որ մեր ժառանգների ու դեռ գալիք սերունդների մեջ էլ սերմանվի հայի անկոտրում ոգին՝ մեր անկախությունն անսասան պահելու եւ հայի ինքնությունը պահպանելու համար»:

Հանդիսությանը ներկա էին Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի բարձրաստիճան հոգեւորականներ, վիրահայ համայնքի հասարակական, գործարար շրջանակների եւ մշակութային կառույցների տասնյակ ներկայացուցիչներ, Վրաստանի խորհրդարանի հայազգի պատգամավորներ:

Միջոցառման շրջանակներում, Յուրի Վարդանյանը Հայաստանի սփյուռքի, մշակույթի, կրթության ու գիտության նախարարությունների կողմից Վրաստանի հայ համայնքի մի շարք ակտիվ ներկայացուցիչների հանձնել է հուշամեդալներ, պատվոգրեր եւ շնորհակալագրեր՝ վերոնշյալ ոլորտներում ունեցած մեծ ավանդի համար: ***(Պարգեւատրվածների անունազգանունները 6-րդ էջում):***

ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ 69-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆՈՒՄ

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՎԵՐԱԴԱՐՁՐԻՆՔ ՕՐԵՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հովման ուղղությամբ, ինչը թույլ տվեց Վրաստանի յուրաքանչյուր քաղաքացու օգտվել ամբուլատոր, ստացիոնար եւ շտապ բժշկական օգնությունից»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին: Նրա խոսքերով, Վրաստանում մշակվել է սոցիալական համընդհանուր պաշտպանության ռազմավարություն, որն ուղղված է սոցիալապես անպաշտպան եւ չքավոր բնակչության պաշտպանությանը: Վարչապետի խոսքերով, դրան է ուղղված նաեւ համերաշխության հիմնադրամի հիմնումը: Վարչապետն անդրադարձավ նաեւ փախստականների հարցին՝ նշելով, որ դա նշանակալի մարտահրավեր է երկրի համար:

Նյու Յորքում, ելույթ ունենալով ներդրումային խորհրդաժողովին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին նշեց, որ լուրջ ներդրողները ներդրումներ են կատարում այն երկրներում, որտեղ գործում է օրենքի գերակայությունը: «Մենք Վրաստանին վերադարձրինք օրենքի գերակայությունը, անզիջում պայքար ենք ծավալել կոռուպցիայի դեմ, վերացրել պաշտոնատար անձանց անպատժելիությունը: Վրաստանը ոչ միայն բաց է, այլեւ անվտանգ՝ գործարարության համար: Վրաստան կատարած ներդրումները նույնքան անվտանգ են, որքան եվրոպական ցանկացած երկրում: Տարբերությունը պակաս սակագներն են ու հարկերը»,- հայտարարեց վարչապետը:

Իրակլի Ղարիբաշվիլին ներկաներին ներկայացրեց կառավարության գործունեությունն ու նպատակը: Նրա խոսքերով, գլխավոր նպատակը մակրոտնտեսական կայունությունն է, շուկայում բաց եւ արդարացի մրցակցությունը, սեփականության համապատասխան պաշտպանությունը, արդարադատության անկախ համակարգի մատչելիությունը, ֆինանսական արդյունավետ համակարգը, օրենսդրական, կայուն, կանխագուշակելի եւ թափանցիկ միջավայրը: «Վրաստանի համար ժողովրդավարության ուղու հաստատման գործում մեծ նշանակություն է տրվում եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրմանը»,- հայտարարեց վարչապետը: Նրա խոսքերով, Վրաստանը բարձր է գնահատում Միացյալ Նահանգների եւ Եվրոպայի հետ ռազմավարական հարաբերությունների նշանակությունը: «Մեզ համար ակնհայտ է քաղաքականության տնտեսական եւ անվտանգության ոլորտում հետագա համագործակցության ներուժը: Վրաստանը Միացյալ Նահանգների եւ Եվրոպայի հավատարիմ բարեկամն է: Բացի այդ, մենք բարձր ենք գնահատում նաեւ փոխհարաբերությունները հարեւանների՝ Թուրքիայի, Հայաստանի եւ Ադրբեջանի հետ: Վրաստանի կառավարությունը մեծ նշանակություն է տալիս Ասիայի, Աֆրիկայի եւ Մերձավոր Արեւելքի երկրների հետ առեւտրական եւ քաղաքական կապերի զարգացմանը: Ինչ վերաբերում է Եվրոպային, ապա այդ առումով առաջիկայում սպասվում են մեծ իրադարձություններ: Հունիսի վերջին Վրաստանը ստորագրեց եվրամիության համար Ասոցիացման համաձայնագիրը: Վրաստանը միշտ եղել է եվրոպական երկիր, եւ Ասոցիացման համաձայնագիրը թույլ է տալիս վերականգնել այդ փոխհարաբերությունը»,- հայտարարեց վարչապետը:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ



## ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

### ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան սեպտեմբերի 24-25-ին, աշխատանքային այցով, գտնվում էր Հայաստանում: Հայաստանի նախարար Սեյրան Օհանյանի հետ հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են ինչպես ռազմական ու ռազմատեխնիկական համագործակցությանն ու տարածաշրջանային անվտանգությանն առնչվող հարցեր, այնպես էլ՝ երկու երկրների պաշտպանական գերատեսչությունների միջեւ առկա համագործակցության մակարդակն ընդլայնելու հնարավորություններն ու բազմակողմ շրջանակներում փոխգործակցության հեռանկարները:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆՈՒՄ

## ԻԼԻԱ ԵՐԿՐՈՐԴ. «ՄԵՐ ԵՐԿՈՒ ԵՐԿՐՆԵՐԸ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՕԱԶԻՍ ԵՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ական օազիս են Կովկասում, ուստի, մենք առանձնակի ուշադիր պետք է լինենք միմյանց նկատմամբ: Ցավոք, հաճախ է պատահում, որ թե' վրաց, թե' հայ ազգերի առանձին ներկայացուցիչներ հանդես են գալիս հայտարարություններով, որոնք խախտում են մեր հարաբերությունները»,- ասաց Իլիա Երկրորդը: «Աշխարհաքաղաքական ներկայիս բարդ իրավիճակում Վրաստանն ու Հայաստանը համատեղ, միմյանց փոխզորացմամբ են պահպանում իրենց ինքնությունն ու անկախությունը: Իսկ դա նշանակում. երբ լավ է Վրաստանը, լավ է նաեւ Հայաստանը եւ հակառակը՝ երբ վատ է Հայաստանը, վատ է նաեւ Վրաստանը»,- ընդգծեց Իլիա Երկրորդը: Իսկ դրա գրավականը, Վրաց Ուղղափառ եկեղեցու ղեկավարի հավաստմամբ, մեր երկու երկրների ու ժողովուրդների միջեւ հարաբերությունների է'լ ավելի խորացումն է ու ընդլայնումը:

Սրբազնագույն եւ Երանաշնորհը, խոսելով վիրահայ համայնքի մասին, նշեց, որ այն Վրաստանի անկապտելի մասն է եւ իր նշանակալի ավանդն է ներդնում Վրաստանի պետականության ամրապնդման ու հզորացման գործում: «Մեր երկու երկրների փոխաջակցությունն առավել ընկալելի է վիրահայերի համար, եւ ես դրա համար խորապես երախտապարտ եմ նրանց: Վրաստանը մեր ընդհանուրի հայրենիքն է»,- հավելեց Իլիա Երկրորդը:



Հանդիպմանը ելույթ ունեցան Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Ռուսլան Պողոսյանը, բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանը, «Վրաստանի հայերի միության» նախագահ Հենրիխ Մուրադյանը, «Բազմազգ Վրաստան» ոչ կառավարական կազմակերպության նախագահ Առնոլդ Ստեփանյանը: Նրանք առանձնակի ընդգծեցին, որ իրենք Վրաստանի լիիրավ քաղաքացիներն են, եւ Վրաստանի ցավը իրենց ցավն է: Նրանք Վրաստանի ղեկավարությանն ու Վրաց Ուղղափառ եկեղեցուն երախտապարտ են իրենց հիմնախնդիրների նկատմամբ ցուցաբերած ուշադրության համար, եւ վստահություն հայտնեցին, որ համատեղ ջանքերով այդ հիմնախնդիրները կկարգավորվեն:

Հանդիպման ավարտին, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքը օրհնություն եւ բարեմաղթանքներ հղեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանին եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին

ԻՐԱՎԻՃԱԿ



## ԹԲԻԼԻՍԻԻ ՍՈՒՐԲ ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԿՍԿՍՎԻ ՀԱՋՈՐԴ ՏԱՐԻ

*Թբիլիսում, սեպտեմբերի 19-ին, մոտ ժամը 18:00-ին, փլուզվել է 20-րդ դարի 30-ական թվականներից չգործող հայկական Սուրբ Մինաս եկեղեցու ծածկի մի մասը:*

Եկեղեցին գտնվում է մայրաքաղաքի Հավլաբար թաղամասում, Գելաթիի 13 հասցեում:

Սեպտեմբերի 20-ին եկեղեցու վիճակը ուսումնասիրել են Վրաստանի մշակութային ժառանգության պահպանության ազգային գործակալության ներկայացուցիչները եւ որոշում ընդունել, որի համաձայն, առաջիկայում կսկսվի եկեղեցու վնասված տանիքի վերականգնումը:

Վնասված եկեղեցի են այցելել եւ ստեղծված վիճակին ծանոթացել Թբիլիսիի փոխքաղաքագլուխ Ալեքսանդր Մարգիշվիլին, Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության փոխնախարար Լեւան Խարատիշվիլին եւ աշխատանքային այցով Վրաստանում գտնվող ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ Արեւ Սամուելյանը:

Համատեղ քննարկման արդյունքում, ձեռք է բերվել պայմանավորվածություն, ըստ որի, առաջիկայում Վրաստանի մշակույթի նախարարությունը, Թբիլիսիի քաղաքապետարանի հետ, կսկսեն պատմական հուշարձանի մաքրման աշխատանքները, կգնահատվի կրած վնասի չափը, Վրաստանի մշակույթի նախարարությունը կկազմի հուշարձանի հետագա պահպանման ու վերականգնման ծրագիր եւ կներկայացնի Վրաստանի կառավարություն՝ 2015 թ. հուշարձանի վերականգնման համար բյուջետային ֆինանսավորում ստանալու նպատակով:

Թբիլիսիի քաղաքապետարանի տեղեկատվության համաձայն, եկեղեցուն տրված է մշակույթի հուշարձանի կարգավիճակ:



### ՄԱԿ

### ԲԱՆԱՁԵՎ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ

*ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը միաձայն ընդունել է բանաձեւ, որը պետություններին պարտավորեցնում է «կանխել ու կասեցնել» քաղաքացիների մասնակցությունն արտասահմանյան հակամարտություններին:*

*Բացի այդ, օտարերկրացիների հավաքագրումը մարտական խմբավորումներում եւ դրա խրախուսումը, բանաձեւի համաձայն, պետք է քրեական հետապնդման ենթարկվեն: Նման որոշում է ընդունվել «Իսլամական պետության» ագրեսիվ գործողությունների ուժեղացման կապակցությամբ:*

*Բանաձեւն առաջարկել էր ԱՄՆ-ը, որը սեպտեմբերին նախագահում է Անվտանգության Խորհուրդը:*

*Փորձագետները հայտարարում են, որ Սիրիայում եւ Իրաքում ծայրահեղական խմբավորումների կողմում կռվում է ավելի քան 70 երկրների շուրջ 12 հազար մարտիկ:*

### ՈՒԿՐԱԻՆԱ

### ԿԱՆՑԿԱՑՎԵՆ ԳԱԶԻ ՇՈՒՐՋ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Ուկրաինայի վարչապետ Արսենի Յացենյուկը եւ Եվրահանձնաժողովի փոխնախագահ Գյունտեր Էթինգերը, որը պատասխանատու է էներգետիկայի համար, համաձայնեցրել են Ուկրաինայի եւ ԵՄ-ի դիրքորոշումները գազի շուրջ Ռուսաստանի հետ հերթական բանակցությունների նախաշեմին:*

*Գազի շուրջ հերթական եռակողմ հանդիպումը՝ ՌԴ-Ուկրաինա-ԵՄ ձեւաչափով, կանցկացվի Բեռլինում: Մոսկվան եւ Կիեւը մինչ այժմ չեն կարողանում համաձայնեցնել Ուկրաինայի համար ռուսական գազի գինը: Ռուսաստանն առաջարկում է «Գազպրոմ»-ի եւ «Նաֆտոգազ»-ի փոխադարձ հայցերի քննարկման ժամանակաշրջանում 385 դոլար ժամանակավոր գին սահմանել հազար խորանարդ մետրի դիմաց: Իր հերթին, Ուկրաինայի վարչապետն առաջարկել է գնի երկու տարբերակ. ամռանը՝ 300 դոլար, ձմռանը՝ 380 դոլար:*

### ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԿՎԵՐԱՆԱՅԻ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

*Արդեն սեպտեմբերի 30-ին Եվրամիությունը հնարավոր է ձեռնամուխ լինի հակառուսական պատժամիջոցների վերանայմանը: Գործընթացը կիրականացվի այն դեպքում, եթե մինչ այդ Ուկրաինայում հրադադարը պահպանվի: Եվրամիության ԱԳ նախարարությունը մշակում է Ուկրաինայում հակամարտության կարգավորման հարցով պայմանավորվածության կատարման մասին փաստաթուղթը: Միջազգային դիտորդներն արդեն ձեռնամուխ են եղել Դոնբասում իրավիճակի վերահսկմանը: Այսպիսով, փորձագետները կարճ ժամանակամիջոցում կարող են անձամբ համոզվել, թե ինչպես է Ուկրաինայի հարավ-արեւելքում պահպանվում հրադադարը, իսկ Ռուսաստանի միջամտությունը սահմանափակվում է միայն տարածաշրջանի բնակչությանը ցուցաբերվող հումանիտար օգնությամբ:*

### ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

### ՇՈՏԼԱՆԴԱՑԻՆԵՐԸ ՔՎԵԱՐԿԵՑԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԻՆ

*Շոտլանդիայում սեպտեմբերի 18-ին անցկացվեց հանրաքվե, որի ընթացքում, տարածաշրջանի բնակիչները որոշում էին՝ մնա՞լ արդյոք Միացյալ Թագավորության կազմում, թե՞ դառնալ անկախ պետություն:*

*Շոտլանդացիների մեծամասնությունը հանդես է եկել Մեծ Բրիտանիայի միասնության պահպանման օգտին՝ հանրաքվեում չպաշտպանելով տարածաշրջանի անկախության գաղափարը:*

*Միասնության օգտին քվեարկել է տարածաշրջանի բնակիչների 55,3 տոկոսը (2 միլիոն 1926 մարդ), դեմ՝ 44,7 տոկոսը (1 միլիոն 617 հազար 989 մարդ):*

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

## ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԱՍՇՏԱԲԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐ՝ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻՈՒՄ



*Վրաստանի մունիցիպալային զարգացման հիմնադրամը, Համաշխարհային բանկի աջակցությամբ, սկսում է տարածաշրջանային զարգացման երրորդ նախագիծը:*

Հիմնադրամի գործադիր տնօրեն Գիորգի Ամաշուկելին, փոխտնօրեն Իվան Դարչիաշվիլին, Համաշխարհային բանկի ներկայացուցիչների հետ, Ախալցիխեում եւ Մցխեթայում հանդիպում ունեցան տարածաշրջանների նահանգապետերի ու տեղի իշխանության ներկայացուցիչների հետ, քննարկեցին այն նախագծերը, որոնք Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցությամբ իրականացվելու են Սամցխե-Ջավախեթիի եւ Մցխեթա-Թիանեթիի տարածաշրջաններում: Տարածաշրջանային զարգացման երրորդ նախագծի նախնական արժեքը կազմում է 75 միլիոն ԱՄՆ դոլար, որից 60 միլիոնը հատկացնելու է Համաշխարհային բանկը, իսկ 15 միլիոնը՝ Վրաստանի պետական բյուջեն:

Նախագծի շուրջ աշխատանքները սկսվելու են 2015 թվականին եւ ավարտվելու՝ 2020 թվականին:

Նախագիծը նախատեսում է վերոնշյալ տարածաշրջաններում ենթակառույցների վերանորոգում, մշակութային հուշարձանների ժողովրդականացում, մասնավոր հատվածի զարգացման աջակցություն: Նախագծի իրականացումը կնպաստի տեղի բնակչության զբաղվածության հարցի կարգավորմանը, սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը, զբոսաշրջիկների թվի ավելացմանը:

Ախալցիխեում եւ Մցխեթայում կայացած հանդիպմանը քննարկվեցին նաեւ նախօրոք առանձնացված ենթանախագծերը:

ՏԱՐԵՐՔ

## ՋՐՀԵՂԵՂՆԵՐԸ ՀԱՆԳԵՑՐԵԼ ԵՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶՈՀԵՐԻ



*Վերջին մի քանի օրերի հորդառատ անձրեւները ջրհեղեղներ են առաջացրել Աջարիայում եւ Գուրիայի տարածաշրջանում: Առանձին բնակավայրեր, գետերի վարարման պատճառով կտրվել են արտաքին աշխարհից:*

Աջարիայում մոլեգնող ջրհեղեղը հանգեցրել է մարդկային զոհերի: Ճորոխ գետի վարարման հետեւանքով, մյուս բոլոր բնակավայրերից առավել տուժել է Խելվաչաուրի շրջանի Մախո գյուղը:

Աջարիայի փրկարար ծառայության պետ Մամուկա Թուրմանիձեի տեղեկատվության համաձայն, ջրասույզ են եղել գյուղի տները, ինչի հետեւանքով զոհվել է մի տղամարդ: Չնայած փրկարարների օպերատիվ գործողություններին, տուժածին չի հաջողվել փրկել:

Փրկարարները հայտնել են, որ ներկայում անհայտ կորած է համարվում մեկ մարդ:

Տարածաշրջանում շարունակվում են սաստիկ անձրեւի ու քամու հետեւանքների վերացման աշխատանքները:

Մոլեգնած տարերքի հետեւանքով, շարքից դուրս էին եկել էլեկտրահաղորդման գծերը, վնասվել էին գազատարներ: Ուժգին քամին պոկել էր բնակելի շենքերի տանիքները եւ տապալել ծառեր: Գրանցվել էին սողանքներ, իսկ Բաթումի եւ Քոբուլեթի քաղաքներում հեղեղվել էին փողոցները:

Վրաստանի վարչապետի հանձնարարությամբ ստեղծվել է արտակարգ շտաբ:

Սեպտեմբերի 22-ին Աջարիա էր ժամանել Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին: Նա հանդիպեց տարերքից տուժած բնակչության հետ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

## ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԿՐԿՆԱՊԱՏԿՎԻ



*Վրաստանի քաղաքապետ Դավիթ Նարմանիայի հայտարարությամբ, սոցիալական անպաշտպան ընտանիքները յուրաքանչյուր երրորդ երեխայի համար 400-ի դիմաց կստանան 800 լարի, չորրորդի համար՝ 1000, իսկ հինգերորդ եւ հաջորդ երեխաների համար՝ 1500 լարի:*

Քաղաքապետի հայտարարությամբ, բազմազավակ ընտանիքների մունիցիպալային օգնության ավելացման նախընտրական խոստումը կատարվել է: «Շնորհավորում եմ բոլոր նրանց, ովքեր կստանան այդ օգնությունը, եւ մենք սկսել ենք ռեալ գործել, թեպետ դա դժվար էր իրականացնել այն բյուջեով, որը հանձնվել էր մեզ»,- հայտարարեց Դավիթ Նարմանիան եւ հավելեց, որ լրացուցիչ հատկացվել է 8 միլիոն լարի, որը բաշխվելու է շրջանային վարչություններին: «2,5 միլիոն լարիով կֆինանսավորվի նաեւ սոցիալական սպասարկման ծառայությունը»,- հայտարարեց քաղաքապետը:

ՔՐԵԱԿԱՆ

## ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ՝ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ

*Վրաստանի գլխավոր դատախազությունը կալանք է դրել Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլու, նրա տիկնոջ՝ Սանդրա Ռուլովսի, ինչպես նաեւ նրա մոր ու տատիկի ունեցվածքի վրա:*

Համապատասխան որոշումն օգոստոսի 29-ին ընդունվել էր Թբիլիսիի քաղաքային դատարանի կողմից, իսկ ավելի ուշ՝ սեպտեմբերի 3-ին, վճռաբեկ դատարանի կողմից՝ դատախազության միջնորդության հիման վրա: Սեպտեմբերի 22-ին Վրաստանի գլխավոր դատախազությունը հավաստեց երկրի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլու բանկային հաշիվների կալանադրման վերաբերյալ տեղեկատվությունը:

Ինչպես հայտարարել է նախկին նախագահի փաստաբան Օթար Կախիձեն, կալանադրված ունեցվածքը ներառում է հողամասեր, Թբիլիսիում տուն եւ ավտոմեքենաներ:

Ինչպես արդեն հաղորդվել է, Վրաստանի դատախազությունը մի քանի ամիս առաջ Սաակաշվիլու նկատմամբ քրեական հետապնդում է սկսել պաշտոնեական լիազորությունները վերազանցելու եւ պետական միջոցները վատնելու մեղադրանքով: Վրաստանի գլխավոր դատախազությունը Սաակաշվիլուն մեղադրանքներ է առաջադրել երեք քրեական գործով՝ պետական միջոցների վատնում անձնական կարիքների համար, խոսքը մոտավորապես հինգ միլիոն լարիի մասին է: Նա նաեւ պատասխանատվության է ենթարկվել 2007 թվականի նոյեմբերի 7-ի ակցան ցրելու գործով պաշտոնեական լիազորությունները վերազանցելու եւ այն ժամանակ Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Վալերի Գելաշվիլու ծեծի ենթարկելու մեղադրանքներով:

Ավելացնենք, որ Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլու գործով նախնական լսումները, որ կապված են 2007 թվականի նոյեմբերի 7-ի բողոքի ակցիան ցրելու հետ, հետաձգվել են եւ կանցկացվեն նոյեմբերի 19-ին:

## ԱՊՕՐԻՆԻ ՎԻԺՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԻԺՆԵՐԸ ԽՍՏԱՑՎՈՒՄ ԵՆ

*Վրաստանի խորհրդարանը խստացնում է արհեստական վիժման համար քրեական պատասխանատվությունը:*

Ապօրինի վիժման վիճակագրություն գոյություն չունի, թեպետ մասնագետները գտնում են, որ դրանք գրեթե եռակի գերազանցում են օրինական վիժումներին: Պաշտոնական վիճակագրությամբ, 2010 թվականին կատարվել էր 26 հազար օրինական վիժում, եւ ծնվել էր 63 հազար երեխա: 2011 թվականին օրինական վիժումների թիվը հասել էր 31 հազարի, ծնված երեխաների թիվը՝ 58 հազարի: 2012 թվականին այդ թվերը համապատասխանաբար կազմեցին 39 հազար եւ 57 հազար: 2013 թվականի տվյալներով, ծնվել է 57 հազար երեխա, եւ արվել է 37 հազար օրինական վիժում: Եթե պաշտոնական վիժումների հետ հաշվի առնենք նաեւ ապօրինի վիժումները, ապա միջին հաշվով Վրաստանում յուրաքանչյուր երկրորդ երեխա ենթակա է վիժման:

Խորհրդարանի առողջապահության եւ սոցիալական հարցերի կոմիտեի նախագահ Դմիտրի Խունդաձեն հայտարարեց, որ Վրաստանում առօրյա արվում է ավելի քան 100 արհեստական վիժում, եւ դա միայն պաշտոնականորեն գրանցված փաստերն են, թեպետ շատ ավելի արվում են ապօրինի եւ քրեականորեն պատժվելի վիժումներ:

Խորհրդարանի ընդունած օրինանախագիծը նախատեսում է արհեստական ապօրինի վիժումների համար քրեական պատասխանատվության խստացում: Ընդունած օրինանախագծի համաձայն, ապօրինի վիժումներ կատարած բժիշկները պատժվում են 120-300 ժամվա հանրօգուտ աշխատանքով կամ 1-2 տարվա ազատազրկմամբ: Իրավախախտման կրկնության դեպքում, ազատազրկման ժամկետը կազմում է 2-4 տարի եւ հանրային գործունեությամբ զբաղվելու 3 տարվա արգելմամբ:



### ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՇԱԲԱԹ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

*Սեպտեմբերի 25-ին Վրաստանում Եվրամիության ներկայացուցչությունը պաշտոնապես բացեց եվրոպական մշակույթի շաբաթը Վրաստանում: Շաբաթվա շրջանակներում, կանցկացվի փառատոն, որի նպատակն է ներկայացնել եվրոպական արժեքները:*

*Սեպտեմբերի 26-ից մինչեւ հոկտեմբերի 6-ը եվրոպական մշակույթի շաբաթին նվիրված միջոցառումները կանցկացվեն Թբիլիսիում, Քութայիսիում եւ Փոթիում: Շաբաթվա շրջանակներում, ծրագրված են վրաց եւ եվրոպացի գրողների հանդիպումներ, համերգներ, կինոցուցադրումներ, թատերական ներկայացումներ, ցուցահանդեսներ եւ այլն:*

### ՆՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ՝ ՀՈՂԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

*Վրաստանի կառավարությունը հաստատել է գյուղատնտեսական նշանակության հողերը օտարերկրացիներին վաճառելու նոր կանոններ: Ինչպես հայտարարեց արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, օրենքում կատարած փոփոխությունների համաձայն, գյուղատնտեսական նշանակության հող չի կարողանա գնել արտասահմանում հիմնված ընկերությունը կամ արտասահմանում գրանցված իրավաբանական անձը:*

*«Գյուղատնտեսական նշանակության հողերը, թեկուզեւ Վրաստանում հիմնված արտասահմանյան ֆիզիկական անձանց կամ արտասահմանյան ընկերություններին չեն վաճառվի սահմանի երկայնքով 5 կիլոմետրանոց գոտում եւ կառավարության կողմից սահմանված հատուկ գոտիներում»,- հայտարարեց Ծուլուկիանին եւ հավելեց, օտարերկրացիները, ովքեր հողը ստանում էին ժառանգությամբ, կարող են դառնալ դրա սեփականատերը: «Դա թույլ կտա համերկրացիներին, որոնք կորցրել են Վրաստանի քաղաքացիությունը, սակայն ստացել այլ երկրի քաղաքացիություն եւ այսօր համարվում են օտարերկրացիներ՝ որպես ժառանգություն, ստանալ նախնիների կողմից թողած հողամասերը»,- ընդգծեց նախարարը:*

### ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

*Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան եւ երկօրյա պաշտոնական այցով Վրաստանում գտնվող ԱՄՆ-ի բանակի քարտուղար Ջոն Մաքյուն Թբիլիսիում կայացած հանդիպմանը քննարկել են համագործակցության հարցերը, Ուկրաինայի իրադրությունը եւ Աֆղանստանում ISAF-ի առաքելությունը: Կողմերը քննարկել են նաեւ պաշտպանության ոլորտում Վրաստանի եւ ԱՄՆ-ի երկկողմ համագործակցության հարցերը: Կողմերը նաեւ արծարծել են ԱՄՆ-ի բանակի եւ Վրաստանի զինուժերի սերտ համագործակցությունը Եվրոպայում:*

### ՍՏՈՒԳՎՈՒՄ ԵՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՍՆՆԴԱԿԵՏԵՐԸ

*Վրաստանի պարենամթերքի ազգային գործակալությունն սկսել է դպրոցների եւ մանկապարտեզների սննդակետերի ստուգումը:*

*Ինչպես հայտնեցին գործակալությունից, սկզբնական փուլում կվերստուգվեն այն օբյեկտները, որոնց ստուգումն արդեն իրականացվել է, եւ որոնք այդ ստուգման շրջանակներում ստացել էին որոշակի հանձնարարականներ ու պարտավորվել ժամանակի ընթացքում կարգավորել թերացումները: Նման դպրոցների թիվը հասնում է 380-ի:*

*Նշեմ, որ Վրաստանում գործում է շուրջ 2 հազար հանրային դպրոց, եւ գործակալությունը ծրագրում է բոլոր այդ դպրոցների ստուգումը: Հաջորդ փուլում, գործակալությունը ձեռնամուխ կլինի մասնավոր դպրոցների եւ մանկապարտեզների ստուգմանը:*

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՄԱԺՈՂՈՎ

# ՀԱՆՈՒՆ «ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐՑԱԽ-ՍՓՅՈՒՌՔ» ԵՌՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

խնդիրների հործանուտում»,- ընդգծեց Հայաստանի նախագահը:

Անդրադառնալով սփյուռքի հետ հարաբերությունների հարցին՝ Հայաստանի նախագահը նշեց, որ այսօր չկան հայրենիքն ու սփյուռքն իրարից բաժանող անցյալ դարաշրջանի անջրպետները: Եվ դա ինքնին ազգային համախմբվածությունը խրախուսող հանգամանք է: Սակայն, այդ համախմբվածությունը ինքնանպատակ չէ: Այն անհրաժեշտ միջոց է, որպեսզի հաղթահարենք ինքներս մեր մեջ բացահայտած վատը: «Հայաստանի կառավարող բոլոր վարչակազմերի ամենալուրջ խնդիրներից մեկը եղել է արտագաղթը: Արդի իրողությունն այնպիսին է, որ այսօր կարող ենք խոսել հայաստանցիների՝ նոր սերնդի սփյուռքի գոյության մասին: Եվ իրար թե' հայրենիքում, թե' սփյուռքում մեղադրելու փոխարեն, մենք պետք է գործնական միջոցներ գտնենք այդ խնդրին լուծում տալու համար: Միասին վեր հանենք բացթողումները եւ արձանագրենք, թե ինչ հակաքայլեր կարող ենք ձեռնարկել:

Համոզված եմ, որ հայրենիքը երբեք հայի համար բանտ չպիտի դառնա: Բայց այն նաեւ չպիտի լինի հյուրանոց: Հյուրանոցը հյուրի համար է, իսկ Հայաստանում յուրաքանչյուր հայ պետք է տոգորված լինի իր տանտերը լինելու հանգամանքով: Յուրաքանչյուր հայ իր տունն ու օջախը պետք է ունենա հայրենիքում»,- հայտարարեց Սերժ Սարգսյանը:

Հայաստանի նախագահի համոզմամբ, «Հայաստան-Սփյուռք» գործակցության վեկտորը պետք է ուղղել Հայաստանի տնտեսական զարգացմանը: «Հայ ժողովրդի կարողություններն ու հնարավորությունները շատ ազգերի նախանձն են շարժում, սակայն դրանց չնչին մասն է տրամադրվում հայրենիքի շենացման համար: Ամեն մի հայ պետք է հարց տա իրեն, թե, այլ երկրներ եւ տնտեսություններ շենացնելուց զատ, ի՞նչ է արել իր հայրենիքի համար, ինչքա՞ն է փորձել թեթեւացնել նրա հոգսը: Եվ այս հարցում ինչպիսի՞ աշխատանք են տարել մեր հայրենիքին ու շնորհակալության արժանի հայկական կառույցները»,- նշեց Հայաստանի նախագահը:




Անդրադառնալով արտաքին քաղաքական հարցերին՝ Հայաստանի նախագահը նշեց, որ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի արդարացի լուծումը բոլորիս նպատակն է: «Այժմ անհրաժեշտ է բոլոր ճակատներում պատշաճ կերպով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչման օրինական պահանջը, նրան պարտադրված գոյամարտը, Արցախի ժողովրդի խիզախությունն ու տոկունությունը, անկախ եւ արժանապատիվ ապրելու կամքն ու բնական իրավունքը:

Պատերազմը դեռ չի ավարտվել, այն պսակվել է մեր հաղթանակն արձանագրած զինադադարով: Եվ այսօր հայկական սահմանները պաշտպանված են մեր անպարտ ու մարտունակ բանակի շնորհիվ: Կարծում եմ՝ յուրաքանչյուր հայ հպարտ է, որ ունենք այսպիսի բանակ, որը վայելում է մեր ողջ ազգի վստահությունն ու սերը եւ կազմակերպվածության օրինակ է ծառայում բոլորիս»,- հայտարարեց Սերժ Սարգսյանը:

Համահայկական 5-րդ համաժողովի մասնակիցներին ուղղված իր խոսքում Հայաստանի նախագահը անդրադարձավ նաեւ Հայոց ցեղասպանության առաջիկա 100-ամյա տարելիցին: «2015 թվականին մենք ազգովի ոգեկոչելու ենք Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը: Այն վերստին հաստատելու է հայրենազրկված հայ ժողովրդի՝ ապրելու եւ արարելու, հարատեւելու կամքն ու վճռականությունը, փաստելու է մեր միասնականության, ազգային իղձերի իրականացման մեր հետեւողականությունը: 2015 թվականը քաղաքական լուրջ նախաձեռնությունների եւ ձեռքբերումների տարի պետք է դառնա «Հայաստան-Սփյուռք-Արցախ» եռմիասնության համար: 2015 թվականը նաեւ դառնալու է իր ծավալով ու նշանակությամբ նախադեպը չունեցող միջոցառումների եւ գործողությունների տարի: Դրանով մեկ անգամ եւս կփաստենք, որ համատեղ ուժերով կարող ենք հսկայածավալ շարժում ստեղծել մեր ազգային նպատակների իրականացման համար»,- նշեց Հայաստանի նախագահն ու հավելեց, որ 2015 թվականը ոչ թե հայոց պահանջատիրության սահմանագիծն է, այլ ազգային վերազարթոնքի նոր հանգրվանը:

Բնութագրելով Ցեղասպանության ճանաչման հարցում Թուրքիայի դիրքորոշումը՝ Հայաստանի նախագահը նշեց, որ այսօր առողջ բանականությունը ստիպում է թուրք հասարակությանը կասկածի տակ առնել պաշտոնական կեղծ պատմագրությունը: «Այդպիսով, ակնհայտ է դառնում, որ Հայոց ցեղասպանության ուրացման՝ Թուրքիայի իշխանությունների քաղաքականությունը քայլ առ քայլ սպառում է իրեն, մտնում փակուղի: Այս զարգացումների հետեւանքով թուրք պաշտոնյաները սկսել են որդեգրել նոր վարքագիծ, նոր գործելաձեւեր, որոնք ներկայացնում են Հայոց ցեղասպանության ուրացման քաղաքականության նորացված, ավելի կատարելագործված ու վերաձեւակերպված տարբերակներ»,- նշեց Հայաստանի նախագահը:

Ընդսմին, Հայաստանի նախագահը համաժողովի մասնակիցներին ներկայացրեց նոր գաղափարը. «Առաջարկում եմ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովը 2015 թվականին վերանվանել «Համահայկական խորհուրդ», որը կդառնա համահայկական հրատապ խնդիրների քննարկման ազգային մշտական հարթակներից մեկը»:

Համաժողովի մասնակիցներին ուղղված իր խոսքում Հայաստանի նախագահը անդրադարձավ նաեւ սիրիահայերի հարցին՝ նշելով, որ այսօր Հայաստանի պետական բոլոր կառույցները ներգրավված են սիրիահայերի հիմնախնդիրները լուծելու աշխատանքներում, թեպետ, ինչպես ընդգծեց Հայաստանի նախագահը, համայն հայությունը, այդ թվում՝ եւ Հայաստան պետությունը, պետք է աջակցեն նաեւ նրանց, ովքեր մնում են Սիրիայում՝ պահպանելու հայկական օջախը:

Ելույթի ավարտին, Հայաստանի նախագահը, խոսելով «Հայաստան-Սփյուռք» հարաբերությունների առաջնահերթությունների մասին, նշեց, որ սփյուռքն իր գոյության առաջին օրվանից պայքարել է հայապահպանության համար: Հայապահպանության գլխավոր կռվաններն են՝ հայոց լեզուն, հայ ընտանիքը եւ իրական հայրենիքը ճանաչելը:

«Հայաստան-Սփյուռք» գործակցության հիմքում ընկած են այս առաջնահերթությունները: Այդ գործակցության սկզբունքը երկուստեք փոխվստահության, միմյանց աջակցելու, համահայկական ընդգրկվածություն ունեցող հարցերում միասնական դիրքորոշում մշակելու մեջ է»,- հայտարարեց Հայաստանի նախագահը եւ հավելեց. «Բոլորիս նպատակն է, որ միասնաբար հաջորդ սերունդներին թողնենք զարգացած, ժողովրդավարական, հզոր, խաղաղ ու ապահով Հայաստան: Մենք միասնությամբ ենք ուժեղ, իսկ ուժը հաղթանակ է»:

# ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՆ ԸՆԴԳԾԵՑ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հայ կազմակերպությունների մոտ 1000 ներկայացուցիչ: Ընդլայնվել էր մասնակցության աշխարհագրությունը՝ աշխարհի շուրջ 60 երկրների հայկական կազմակերպությունների ու կառույցների ղեկավարներն ու ներկայացուցիչները՝ 741 մասնակից: Վրաստանը ներկայացվել էր 45 պատվիրակներով, Արցախը՝ 20, Հայաստանի Հանրապետությունից համաժողովին մասնակցում էին 310 պետական, քաղաքական, մշակութային գործիչներ, գիտնականներ ու լրագրողներ: Սփյուռքից մեծ ներկայացուցչություն էր ապահովել Ռուսաստանը՝ 129 մասնակից, Սիրիան՝ 103, Լիբանանը՝ 74 մասնակից, ԱՄՆ-ը՝ 77 մասնակից, Ֆրանսիան՝ 31, Իրանը՝ 25, Կանադան՝ 22: Մասնակիցներ կային Ավստրալիայից, Արգենտինայից, Չիլիից, Հարավային Աֆրիկայի Հանրապետությունից:

«Հայաստան-Սփյուռք» 5-րդ համաժողովի բացմանը ելույթ ունեցան Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը: Մայր Աթոռ Սուրբ էջմիածնից համաժողովի աշխատակիցներին իր օրհնության խոսքը բերեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը: Համաժողովի մասնակիցներին իրենց օրհնության խոսքն հղեցին նաեւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը, Հայ Կաթողիկե եկեղեցու Պատրիարք-Կաթողիկոս Ներսես Պետրոս ԺԹ-ն, Հայ Ավետարանական եկեղեցիների համաշխարհային խորհրդի նախագահ, Հայաստանի Ավետարանական եկեղեցու ավագ հովիվ, Վերապատվելի դոկտոր Հովել Միքայելյանը:

Լիագումար նիստում համագումարի չորս հիմնական թեմատիկ ուղղությունների վերաբերյալ զեկուցումներով հանդես եկան Հայաստանի սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը («Հայաստան-Սփյուռք» գործակցության արդի առաջնահերթությունները եւ ապագային միտված խնդիրները), ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի քարտուղար Հայկ Դեմոյանը (Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների կազմակերպման մասին), Սիրիահայերի հետ տարվող աշխատանքները համակարգող աշխատանքային խմբի ղեկավար, Հայաստանի սփյուռքի նախարարության աշխատակազմի ղեկավար Ֆիրդուս Զաքարյանը (Հայաստանի Հանրապետությունում ապաստանած սիրիահայերի հիմնախնդիրների մասին) եւ Լրագրողների համահայկական համաժողովները համակարգող մարմնի նախագահ, Լիբանանի «Ազդակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Շահան Գանտահարյանը (Հայկական մամուլի դերը համաշխարհայնացվող աշխարհում): Նշենք, որ Համաժողովի շրջանակներում անցկացվեց Լրագրողների համահայկական 7-րդ համաժողովը, որին մասնակցեց ոլորտը ներկայացնող 160 զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչ Հայաստանից եւ սփյուռքից:



Սեպտեմբերի 20-ից համաժողովի աշխատանքները շարունակվեցին «Էլիտ Պլազա» բիզնես-կենտրոնում: Լիագումար նիստի շրջանակներում, ամփոփվեցին չորս թեմատիկ ուղղությունների քննարկման արդյունքները:

Համաժողովին փակման խոսքով հանդես եկավ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը (տես, ելույթի հակիրճ տեքստը):

«Հայաստան-Սփյուռք» 5-րդ համաժողովի մասնակիցներն ընդունեցին հայտարարություն:

«Հայաստան-Սփյուռք» 5-րդ համաժողովի մասնակիցների առջեւ միջազգային հարաբերությունների վերլուծությամբ հանդես եկավ Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը: Համաժողովի մասնակիցները հյուրընկալվեցին նաեւ Հայաստանի պաշտպանության նախարարությունում, հանդիպում ունեցան պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի, գերատեսչության մյուս ղեկավարների ու վարչությունների պետերի հետ, դիտեցին հրազենի եւ զինվորական հանդերձանքի նմուշները:

Համաժողովի աշխատանքի շրջանակներում, մասնակիցները Երեւանի Գ.Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում դիտեցին Պերճ Զեյթունցյանի «Ոտքի', դատարանն է գալիս» ներկայացումը:

Սեպտեմբերի 21-ին, Հայաստանի Հանրապետության Անկախության տոնին համաժողովի մասնակիցները այցելեցին Եռաբլուր պանթեոն, ապա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ներկա եղան Սուրբ Պատարագին:

Երեկոյան «Հայաստան-Սփյուռք» համաժողովի պատվիրակները մասնակցեցին ՀՀ Անկախության օրվան նվիրված ՀՀ նախագահի ընդունելությանը եւ տոնական համերգին, որով էլ եզրափակվեց «Հայաստան-Սփյուռք» 5-րդ համաժողովի ծրագիրը:

*Լուսանկարները՝ ՎԱԼԵՐԻ ՀՈՒՆԱՆՅԱՆՑԻ «Արմենպրես»-«Վրաստան»*

ԳՆԱՀԱՏՈՒՄ

## ՊԱՐԳԵՎՆԵՐ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԻՐԱՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ

*Հայաստանի Անկախության 23-րդ տարեդարձի առիթով, Հայաստանի կրթության եւ գիտության, մշակույթի ու սփյուռքի նախարարությունները պատվոգրերով, շնորհակալագրերով եւ մեդալներով պարգեւատրեցին վիրահայ կրթության եւ մշակույթի մի խումբ գործիչների:*

Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան թատրոնի նախկին գեղարվեստական ղեկավար **Միքայել Գրիգորյանը** արժանացել է մշակույթի նախարարության «Պատվոգրի» եւ «Գրիգոր Նարեկացի» հուշամեդալի, Շահումյան ավանի թիվ 1 դպրոցի տնօրեն, Վրաստանի քաղաքացիական բարձրագույն պարգեւի՝ «Պատվո շքանշանի» ասպետ **Արտուշ Ուռումյանը**՝ սփյուռքի նախարարության «Մայրենիի դեսպան» մեդալի, «Բազմազգ Վրաստան» հասարակական կազմակերպության ղեկավար **Առնոլդ Ստեփանյանը**՝ սփյուռքի նախարարության պատվոգրի, **Մառա Կիրակոզովան**՝ մշակույթի նախարարության շնորհակալագրի: Հայաստանի կրթության եւ գիտության նախարարության շնորհակալագրերի արժանացան Թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոցի մանկավարժ **Մարինա Արշակյանը**, Մառնեուլիի շրջանի Աղքյորփի գյուղի հանրային դպրոցի ուսուցչուհի **Զվարթ Մելիքջանյանը**, Խոժոռնի գյուղի հանրային դպրոցի ուսուցչուհի **Էմմա Պետրոսյանը**: Հայաստանի կրթության եւ գիտության նախարարության պատվոգրերի արժանացան Շահումյան ավանի թիվ 2 դպրոցի տնօրեն **Անահիտ Ռեսթեւանյանը**, Միրզոեւկա գյուղի դպրոցի տնօրեն **Վանիկ Հարոսյանը**, Թբիլիսիի թիվ 103 դպրոցի նախկին մանկավարժ **Թամարա Մարկոսյանը**, Կարմիր գյուղի դպրոցի ուսմասվար **Արկադի Պետրոսյանը**: